

ՊԻԱՏՐԵ ԱՐՍԿ

859.9

4-33

9 5062-

859.9
4-33

51

07 JUN 2006
18 NOV 2011

ԿԱՐՄԵՆ ՍԻԼՎԱ

ԲՈՒՄԵՆԻԱՅԻ ԵՂԻՍԱԲԷԹ ԹԱԳՈՒՀԻ

Պ Ի Ա Տ Ր Ա Ա Ր Ս Ա

Կ Ա Ս

ԽԱՆՁՈՒԱԾ ՔԱՐ

Թ ա ր գ մ ա ն ու ր ի ն

Ռ Ա Շ Ի Դ Ի

Թ Ի Ֆ Լ Ի Չ

Տպարան Մովսես Վարդանյանի

1888

859.9
4-33

20.05.2013

8370
3881

Доз. Ценз. Тифлисъ, 24-го Сентября 1888 года.

Тш. М. Вартанянца, Тройц. пер. домъ № 11.



5067-50

ՊԻԱՏՐԱ ԱՐՍԱ

Հարտ էր, այո, շատ հպարտ էր գեղեցիկուհի Պատնան, որովհետեւ նա ունէր խոշոր, մութ աչքեր, սեւ յօնքեր, սրածայր եւ արծուի քիթ: Թէեւ բերանը մի փոքր մեծ էր, բայց գեղեցիկ էր եւ երբ նա խօսում կամ ծիծաղում էր մէկի հետ, այն ժամանակ փայլում էին նրա երկու կարգ սպիտակ առամները: Նրա սեւ ծամերը ընկած էին գլխի վրա, որոնք կազմում էին ինչպէս մի թագ եւ այդ էր պատճառը, որ մարդիկ ահուանում էին նրան «երիտասարդների թագուհի»: Իսկ երբ իւր լայն թիկունքներով եւ

իւր սովորական մեծ քայլերով ման էր գալիս, այն ժամանակ նա գլուխը այնպէս բարձր էր պահում, որ կարծես տանում լինէր գլխի վրայ մի բան: Բայց նա այդպէս չէր հպարտանում եւ գլուխը այդպէս բարձր չէր պահում, երբ խօսում էր իւր ծաննասի հետ, այլ այդ ժամանակ ինքը լռում էր եւ միշտ լսում էր ծաննասին: Իսկ երբ մէկը համարձակվում էր նրա հետ հանաք անելու, այդ ժամանակ Պաուլոսն սաստիկ կարմրում էր եւ պատրաստվում էր խիստ պատասխան տալու:

Երիտասարդները շատ նախանձուեցին ծաննասին, մանաւանդ այն ժամանակ, երբ հաստատուեցաւ դրանց նշանախօսութեան լուրը:

Բայց այդ ժամանակ պատերազմի տարի էր. ծաննասը իրենց զօրաւորի հետ գնաց պատերազմ Վանուր գետի վրա: Պաուլոսն մարդկանց առաջ թագցնում էր արտասուքները. իսկ թէ ինչ էր անում, երբ նա մենակ էր մնում, այդ մասին ոչոք չէր համարձակվում հարցնել:

Նա բանը այնպէս էր կարգադրել, որ գիւղի մէջ առաջինը ինքն էր իմանում պատերազմից լուրեր: Լսելով լրաբերին, թէ ինչպէս է կատարուել առաջին կոտորուածը, նա յենվում էր գիւղի մուտքի մօտ գտնուած քարէ խաչի վրայ եւ այդ ուժեղ օրիորդի աչքերը մթնում էին: Գիշերները նա չէր քրնում եւ ճրագը չէր հանգցնում, որպէս զի չներկայանան իրան զարհուրելի պատկերներ — վիրաւորուած, մեռած կամ մեռնող ծաննասը...

Մի մութ գիշեր, դեռ չհանուած նստած էր Պաուլոսն իւր անկողնի եզրին եւ մտածում էր... Նրա մոքքովն էլ չէր անցնի, որ հէնց այդ ժամանակ մէկը անցաւ տան մօտովը եւ այժմ նայում է իրեն պատուհանից:

Այդ րոպէին Պաուլոսն շատ գեղեցիկ էր իւր լայն բացուած մտածող աչքերով, որ բեւեռել էր մի տեղ. իսկ սեղմած ձեռքերը դարձել էր ծնկներին:

Պատուհանը ծեծեցին. Պաուլոսն իրան դպելով, որպէս զի ձայն չհանէ, վեր է թրու-

չում, բարձրացնում է գլխիսը եւ նայում մը-
թութեան մէջ:

Նրան թւում է, իբր թէ տեսնում է
Տաննասին:

Հէնց այդ րոպէին կանչում են կամոց.

— Պառնա, խնդրում եմ քեզանից, սի-
րելի Պառնա, դուրս արի այստեղ ինձ մօտ:
Մի վախենայ, ես Տաննասն եմ:

Պառնան բաց է անում դրան փախտիքը,
դուրս է վազում եւ զգում է, որ իրան գրը-
կեցին: Նա յետ է մղում իրեն բռնող ձեռքը
եւ հարցնում է.

— Մի՞թէ յիրաւի դու ես: Արդեօք չեմ խաբ-
ւում:

— Ահա, Պառնա, շօշափիր քո մատանին
եւ ահա, վզիս դրամը. . . ես չկարողացայ համ-
բերել, ցանկացայ տեսնել քեզ, արդեօք կրկին
հաւատարիմ ես ինձ:

— Ո՞վ դուրս արաւ քեզ զօրքից:

— Ի՞նչ. . . . ոչոք:

— Ոչոք: Ել ի՞նչու ես այստեղ: Մի՞թէ
պատերազմը վերջացաւ:

— Ո՛չ, չէ վերջացել, այնտեղ ամենքը կրու-
ւում են, ես ծածուկ հեռացայ, սրտհեռեւ
քեզ սիրում եմ, Պառնա:

— Սիրո՞ւմ ես ինձ:

Պառնան ծիծաղեց հեգնաբար: --

— Ուրեմն դու կարծում էիր, թէ ես
կուրախանամ, որ իմ սիրահարը մի փախտա-
կան զինուոր է. . . . հեռո՞ւ. . . . հեռո՞ւ աչքերիցս:

— Մի՞թէ. . . Պառնա. . . մի՞թէ այդ է
քո սէրը, որ ուղարկում ես ինձ դէպի կո-
րուստ, դէպի մահ. . .

— Գնա, ուր որ ուզում ես: Ես քեզ ա-
սում եմ, ոչ մի ժամանակ ես քո կինը չեմ
լինի. . . պէտք է ատեմ քեզ, իսկ ես այդ-
տանեւ չեմ կարող:

— Ուրեմն դու ուրիշին ես սիրում:

— Ո՛չ, Տաննաս, ո՛չ. ես միայն քեզ սիրեցի
եւ սիրում եմ եւ քեզ համար ամբողջ գիշեր-
ներ չեմ քնել. . . . բայց ես ամենեւին չէի
էլ երեւակայում, որ իմ սրտիս գանձը — փախ-
կոտ է:

Նա ծածկեց երեսը ձեռքերով եւ սկսեց հեկեկալ:—

— Իսկ ես կարծում էի թէ կըհանդիպես ինձ ուրախութեամբ եւ ինձ կըթագցնես. . .

— Ո՛հ, խայտառակութիւն, աղաղակեց օրիորդը, խայտառակութիւն, որ ես քո նշանածն եմ: Բայց կրկնում եմ քեզ, որ աւելի շուտ Բուչէղժիի լեռքը կայրուի, քան թէ ես քո կինը կրկնեմ:

— Բայց ես քեզ ասում եմ, աղաղակեց Տաննասը— կըտեսնես ինձ մեռած կամ անդամաթիւրած:

Երկու երիտասարդները կանգնած էին միմեանց հանդէպ, նրանց հայացքները այնպէս փայլում էին, որ լուսաւորվում էին խաւարի մէջ:

Յանկարծ վերելը տարածուեցաւ կարմրագոյն բոց. նրանք վեր նայեցին: Բուչէղժիի գլխահետեայ սուր կատարներից մէկը կարծես թէ կարմրում էր. կթակը հետզհետէ պայծառանում էր, բարձրանում էր բոց եւ աստղերի նման ցլանում էին կայծերը. . .

Սիրահարները կանգնած էին քարացածի նման:

Հարեւանների տների պատուհանները հեւաբզեռեալ բացվում էին եւ ժողովուրդը աղաղակում էր. «Անտառն այրվում է. . . . Ո՛հ, սարն է այրվում»: Շները հաջում էին. իսկ պաղաղները կանչում. . .

Պառնան բռնեց երիտասարդի ուտերից եւ հրեց հեռու:

— Հեռու, աղաղակեց նա, ծածկիր երեսդ, ապա թէ ոչ, ես ամօթից կըմեռնեմ:

Նա յետ դրեց դուռը եւ հանգցրեց ձրբազը: Նրա սիրտը սաստիկ տրոփտրոփում էր եւ նա նայում էր թէ ինչպէս Տաննասը անցնում էր տների սառեւերների տակ, թէ ինչպէս հուրհուրատում էր սարը եւ թէ ինչպէս հետզհետէ մթնում էր. . . Պառնան պատասխան չէր տալիս նրանց, որոնք կանչում էին նրան, որ տեսնի սարի հրաշքը:

Այդ օրից, ամենքը նկատեցին, որ Պառնան սովորականից դուրս գլուխաւորում է: Ժպիտը այլեւս չէր թռթռում նրա առաջուայ

ուրախ շրթունքների վրայ: Առաջուայ ճար-
պիկութեամբ հանաքներին սյլեւ չէր պատաս-
խանում: Լուռ աշխատում էր նա եւ յաճախ
այնպէս յոգնում էր, որ նստելով ջրհորի մօտ,
զովացնում էր գլուխը ջրով: Երբեմն տխուր
նայում էր ջրհորին եւ ապա երկիւղով նայում
վեր, դէպի Բուէչգոթիի սարը:

Գիւղում արդէն խօսում էին, որ Տան-
նասը եկել է գիւղը, թէ այս կամ այն մարդը
տեսել են նրան այն ժամանակ, երբ հուրհու-
րատում էր սարը եւ մինչեւ անգամ ճանաչել
են նրա ձայնը, երբ նա խօսում է եղել Պա-
ունայի հետ:

Երբ այդ մասին հարցրին Պաունային,
նորա ճակատի վրայ դուրս ցայտեցան քրտնքի
խոշոր կաթիլներ եւ ցնցուեցան նրա շրթունք-
ները: Նա պատասխանեց.

— Կարծեմ, երբ բորբոքուեցաւ սարը, ինձ
մօտ եւ մութ էր եւ հանգիստ:

Պաունայի մայրը շարժում էր գլուխը,
կծոտում էր շրթունքները եւ նկատում, որ

մեր մեղաւոր ժամանակները պատահում են
մեծամեծ հրաշքներ:

Շուտով լուր հասաւ, որ տեղի ունեցաւ
զարհուրելի կոտորուած: Այս անգամ Պաու-
նան ամենից ուշ իմացաւ. նա վազեց շուտով
տուն, պատրաստեց մի կապոց, փաթաթեց
թաշկինակի մէջ դրւում եւ եգիպտացորեն եւ
երբ մայրը վրդովուած հարցրեց թէ ո՞ւր է
նա գնում, նա միայն պատասխանեց.

— Շուտով կրվերադառնամ, մայրիկ, ինձ
համար անհանգիստ մի լինի:

Երեկոյեան աղջամուղջի մէջ լայն սրի-
ւուել է պատերազմի դաշուր. նրա վրայ ըն-
կած են հազարաւոր սպանուածներ, ձիերը սառ-
կում էին կծկուելով եւ իջեցնելով գլուխները
գիպչում դիակներին. . .

— Պահապանների պայծառ խարոյկների
մօտ հանգատանում էր զօրքը, ուշադրութիւն

չդարձնելով վիրաւորութեան հառաչանքներին, որոնք տարածվում էին դաշտի մէջ: Բայց ահա բանակների շարքերի միջով անցնում էր մի բարձրահասակ կին եւ փնտրելով հարցնում Տաննասին. . .

Համարձակ մօտենում էր նա թէ իւրայիններին եւ թէ թշնամիներին. շատերին նա ջուր էր տալիս եւ ուշադրութեամբ տնայում էր սպանութեաններին:

Արդէն խոր գիշեր էր. լուսինը լուսաւորում էր զարհուրելի տեսարանի վրայ. իսկ օրիորդը միշտ շրջում էր դաշտի մէջ, միշտ քայլում էր, կանգնում էր, չոքում էր, իւր կրծքին էր դնում սպանուածի գլուխը եւ գգուելի ու այլակերպուած գիակի վրայ փրնտրում էր մատանին կամ վզի դրամը. . .

Նա երբեմն վազում էր, բայց իսկոյն վերադառնում եւ նորից, բոլորովին շունչը կտրած, դարձեալ նայում էր սպանութեաններին:

Արդէն ամբողջ բանակը ընկղմուեցաւ քնի մէջ. իսկ Պաուսան գեռ թափառում էր զարհուրելի դաշտի վրայ—լուսաւորուած լուսնի

լուսով եւ կանչում էր կամայ ձայնով.

— Տաննաս. . .

Նրա պատասխանը լինում էր վիրաւորի հառաչանքը, որին նա ջուր էր տալիս:

Առաւօտը մօտենում էր. երկինքը սպիտականում. իսկ լուսնի լոյսը աղօտանում:

Բայց ահա հեռուն փայլեց ինչ որ. Պաուսան մօտեցաւ. այդ մի կիսակողոպտած սպանուած էր, որի ձեռքին փայլում էր բարակ մատանի: Սպանուածը ամուր սեղմել էր իւր ձեռքերի մէջ մի ինչ որ, որ կախուած էր պարանոցից. նա այնպէս պինդ էր սեղմել, որ կողոպտողները չկարողանալով բանալ դրա մատները, հեռացել էին դրանից:

— Տաննաս, աղաղակեց Պաուսան՝ ճանաչելով իւր մատանին. նա վայր ընկաւ նրա մարմնի մօտ, որի արիւնաշաղաղ երեսը անձանաչելի էր:

Միջանի ըոպէից յետոյ ուշքի գալով եւ խեղտուելով արտասուքներից, նա լուաց այդ թանկագին երեսը, որի երկու աչքը եւ քիթը ոչնչացրած էին սրի հարուածով:

Վերքը լուսնային արիւնը նորից սկսեց հոսել, որ նշան էր թէ իւր սիրելին դեռ կենդանի էր: Նա շտապով թաց արաւ նրա շրթունքները եւ կապեց վերքը իւր թաշկինակով:

Վիրաւորուածը խոր հոգոյ հանեց եւ լսելով իւր անունը սկսեց օդը բռնել. ապա երկար ժամանակ շօշափում էր Պատւնայի երեսը:

— Իմ Պատւա, շնջում էր նա հագիւ լսելի ձայնով, թող ինձ մեռնելու. ես կոյր եմ, եւ այլ եւս պէտք չեմ աշխարհում:

— Պէտք ես, պէտք, ազադակեց Պատւնան, դո՛ւ, իմ սիրելի, դո՛ւ, եթէ Աստուծոյ կամքն է իմ մարդն ես եւ շատ շուտով. բայց մինչ այդ լռի՛ր, լռի՛ր:

Այդ օրուանից անցնում են շատ շաբաթներ եւ այդ ամբողջ ժամանակ Պատւնան առանց հանգստանալու, օր ու գիշեր անց էր

կացնում վիրաւորուածի անկողնի մօտ, հոգ տանելով նորա վրայ:

Փողոցում, գիւղի մէջ, գնում էին երկու անցորդներ, մէկը կոյր, դիւռուորի վերարկուի մէջ կրծքին շքանշանով. իսկ միւսը մի օրիորդ, որը հոգատածութեամբ տանում էր կոյրին եւ բարեկամաբար ուրախ խօսակցում հանգիպողների հետ.

— Ահա իմ ամուսինս. նա հերոս է եւ ահա պատուաւոր նշանը կրծքին:

— Եւ երեսիս, հառաչելով կամաց, աւելացնում էր ծաննասը:

Ոչ մի ժամանակ այդպիսի ազմկալից հարսանիք չէր եղել: Սօտակայ եւ հեռու գիւղերից գալիս էր ժողովուրդը տեսնելու գեղեցկուհի Պատւնային ձեռք ձեռքի տուած կոյրի հետ:


Իսկ նա ամենի հետ ծիծաղում էր եւ ատում:

— Ես պարծենում եմ, իմ մարդը հերոս է, փառք Աստուծոյ, ես ուժեղ եմ եւ կարող եմ երկուսի տեղ աշխատել:

Նշան

— 16 —

Այն սարը, որի վրայ տեսել էին հրակը,
անուանեցին «ՊԻԱՏՐԱ ԱՐՍԱ» կամ «ԽԱՆ-
ՋՈՒԱԾ ՔԱՐ», որովհետև հովիւները եւ որ
սորգները երգւում էին, որ այնտեղ ժայռը
ածուխ է դարձել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0315595

8370